



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

22 դեկտեմբերի 2014թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի  
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Անուշ Հովհաննիսյանի անհատական դիմումով  
գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Անուշ Հովհաննիսյանը դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 1-ին, 8, 31-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել 2000 թվականի օգոստոսի 9-ի ՆՏ մաքսային օրենսգրքի մինչեւ 05.12.2012թ.-ը եղած եւ գործող խմբագրությամբ 95 հոդվածի 1-ին մասի, 86 հոդվածի, 128 հոդվածի 1-ին մասի, 134 հոդվածի եւ 96 հոդվածի 2-րդ մասի նորմերը»:

1. Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ «...կիրառված իրավական նորմերը ակնհայտորեն չեն բավարարել իրավական որոշակիության պահանջները», ինչի արդյունքում, ըստ դիմողի, խախտվել է իր սեփականության իրավունքը, որի իրացումը շարունակաբար խոչընդոտվում է՝ իր գույքն օրենքով սահմանված կարգով մաքսագերծելու անհնարինության պարճառով, եւ որ վիճարկվող դրույթների անհատակ, ոչ որոշակի ձեւակերպված լինելը հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ վերոհիշյալ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.

ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակարդ, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակարդ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Միաժամանակ, ՆՏ Սահմանադրության վերոհիշյալ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այն իր կոնկրետացումն է սրացել «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որում սահմանված են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող՝ ՆՏ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, 86-րդ հոդվածի, 128-րդ հոդվածի 1-ին մասի, 134-րդ հոդվածի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները վերջնական դատական ակարդ չեն կիրառվել իր նկատմամբ: Ներելաբար, ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ գործը քննության ընդունվել չի կարող:

Միաժամանակ, սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթներից՝ ՆՏ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՆՏ սահմանադրական դատարանի որոշումը (ՄԴՈ-1176, 02.12.2014թ.):

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Քաղաքացի Անուշ Նովհաննիսյանի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

22 դեկտեմբերի 2014 թվականի  
ՍԴԴԿՈ/1-23